ԵՐԱՆԱՎ ԲԱԶԻԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ ԴՎԻՆԻ ՄԻՋՆԱԲԵՐԴՈՒՄ

Ա. Ա. ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ, Կ. Կ. ՂԱՖԱԴԱՐՅԱՆ

1961—1962 թթ. Դվինի միջնաբերդում բլրի գագաթի արևելյան հատվածում բացվել են 29×12,5 մ չափերով ուղղանկյուն Երանավ մեծ սրահի մնացորդներ։ Սրահն ունեցել է ութ սյուն, յուրաքանչյուր երկայնական կողմում՝ չորսական։ Տեղում պահպանվել է խարիսխներից մեկը։ Սրահի ողորկ, կրաշաղախ հատակը, որը խիստ խաթարված է վերին շերտերի շինությունների հորերով, ունի մանր գետաքարերով կառուցված հիմնաշերտ։ Պահպանվել են միայն սրահի պատերի հիմքերը, որոնք շարված են սպիտակ ավազաքարով և կավե շաղախով։ Շինության ծածկն ամենայն հավանականությամբ եղել է փայտաշեն։

Կրաշաղախի հատակի կենտրոնում հստակ ուրվագծվում են կիսաբոլոր հատակագծով ինչ-որ կառույցի հետքեր, որոնք հավանաբար պատկանել են այդտեղ տեղադրված ամբիոնի կամ գահավորակի։ Այս նկատառմամբ էլ կառույցն անվանվել է գահանիստ դահլիճ և վերագրվել Արշակունի հայ թագավորներին[1]։ Ոչ մի կասկած չի հարուցում շինությունը IV դ. թվագրելը և այն, որ դա Արշակունիների շինարարական գործունեության արդասիք է։ Հուշարձանի շերտագրական քննությունը ցույց է տալիս, որ շինությունը 640 թ.՝ արաբների առաջին արշավանքի ժամանակ քանդվել է։ VI դ. Երանավ դահլիճի տեղում, ըստ երևույթին, գտնվել է քաղաքի դիվանը, որտեղ պահվում էին տարբեր բնույթի փաստաթղթեր։ Փոքր սենյակներից մեկում, որի հատակը սյունազարդ սրահի հատակից մոտ 1 մ բարձր էր, գտնվել են մեծ քանակությամբ կնքադրոշմներ[2]։ VIII դ. սկզբներին, երբ Դվինի միջնաբերդում կառուցվում է արաբ ոստիկանի կավակերտ պալատը, սյունազարդ դահլիճի արևմտյան թևը լրիվ քանդվում է, իսկ հատակը մասամբ խորացվում։ Դահլիճի արևելյան թևը պատի հետ մեկտեղ նույնպես խիստ ավերված է և այժմ հնարավոր չէ վերականգնել նրա հատակագծի այդ հատվածը։

Գահանիստ դահլիճի հատակագծի վերակազմության առաջին փորձը (աղ., նկ. 1, հեղինակ՝ Դվինի արշավախմբի ճարտարապետ Գրիգոր Փոշոյան), դեռևս 1960-ական թվականներին լուրջ տարակարծություններ առաջացրեց։ Շինության ֆունկցիոնալ նշանակության վերջնական որոշման կապակցությամբ 1983—1985 թթ. գահանիստ դահլիճը մեր կողմից լրացուցիչ մանրակրկիտ ուսումնասիրվեց և կատարվեցին պեղումներ։ Այդ աշխատանքների ժամանակ պարզվեց հետևյալ պատկերը։ 1. Երանավ դահլիճն առանձին կանգնած շինություն է՝ առանց կից սենյակների, որ բնորոշ չէ պալատական կառույցներին։ Դահլիճի հյուսիսային և հարավային կից հատվածների սալորին շերտերի պեղումները երևան բերեցին անտիկ շինությունների մնացորդներ, որոնց պատերը գտնվում են անմիջապես դահլիճի հատակի տակ։ Շերտագրական այս պատկերը թույլ է տալիս ենթադրելու, որ շինությունը կառուցվել է քաղաքի հիմնադրումից անմիջապես հետո, առաջին շինարարական փուլում, IV դ. 30-ական թվականներից հետո։ Այս ենթադրությունը հիմնավորվում է նաև նյութական մշակույթի տվյալներով։

---

1 Կ. Գ. Ղաֆադարյան, Դվինում պեղված ճարտարապետական երկու հուշարձան, (Պատմա-բանասիրական հանդես, 1979, № 4, էջ 119—126), նույնի՝ Դվին քաղաքը և նրա պեղումները, II, Երևան, 1982, էջ 89—96։

2 А. А. Калантарян, Раннесредневековые буллы Двина, Ереван, 1982.



1





3

2. Կառույցի նոր հետազոտություններ։ Լապես փոխեցին նրա հատակագծային հորինվածքի վերարերյալ եղած պատկերացումը (աղ., նկ. 2)։ Գր. Քոչոյանի վերականգնած հատակագծում կողմնային նավերի լայնությունը 2,7 մ է, իսկ կենտրոնականինը՝ 7,1 մ։ Կրաշաղախ հատակի վրա

հստակ գծագրվող խարիսխների տեղադրության նորահայտ հետքերի շնորհիվ ճշգրտվեցին այս չափերը, որոնք կազմում են համապատասխանաբար 3,4 մ և 5,8 մ: 1962 թ. պեղումների լուսանկարները և չափագրությունները ակնհայտորեն ցույց են տալիս, որ միակ պահպանված խարիսխը գտնվել է գրեթե իր տեղում, և, մեզ համար անհայտ պատճառներով, վերականգնված գծագրում այն տեղադրվել է մեծ շեղումով:

3. Նոր պեղումներով պարզվեց, որ բոլոր խարիսխների տակ եղել են տուֆի և ավազաքարի մեծ բլոկներից շարված տարբեր չափերի ուղղանկյուն կամ քառակուսի հիմնահարթակներ, որոնց կենտրոններում կանգնեցվել են քառանկյուն սյունախարիսխները: Հարթակները, անկասկած, կառուցվել են հնարավոր նստվածքները մեղմելու նկատառումով: Հավանաբար, շինարարները հաշվի են առել այն հանգամանքը, որ նախորդ շրջանի կառուցումները այդ տեղում բավականին թուլացրել են հիմնահողը: Հիմնահարթակների սրբատաշ քարերը պատկանել են արդեն ավերված ինչ-որ մոնումենտալ շինության: Այդ քարերի վրա պահպանվել են կրաշաղախի և կարմիր ու սպիտակ ներկերի հետքեր, հավանաբար՝ որմնանկարների մնացորդներ: Կան նաև պատուհանների բացվածքների կամ խորշերի անկյունաքարեր: Շինարարական տեխնիկայի տեսակետից այս հանգամանքը, որոշ տարակուսանք է առաջացնում, քանի որ այս տարածաշրջանի մոնումենտալ բոլոր կառուցվածքները եռանավ սրահի նաև նախորդող՝ անտիկ և անցման շրջաններում, սովորաբար կառուցվել են տեղական սպիտակ ավազաքարով, և տուֆի մեծ բլոկների օգտագործումը հազվադեպ երևույթ է եղել: Կիրը՝ որպես շինանյութ հաճախ է օգտագործվել ուշ անտիկ ժամանակաշրջանում (Դաոնի, Արտաշատ): Դվինում նախապես այն հանդիպում է վաղ քրիստոնեական կառուցվածքներում, որոնք կարող էին քանդվել IV դ. 60-ական թվականներին՝ Շապուհ Բ-ի արշավանքների ժամանակ, կամ V դ. 40—50-ական թվականներին՝ Սասանյան Իրանի դեմ մղված աղատագրական պայքարի տարիներին, երբ մի շարք բնակավայրեր ավերվում են:

Թվում է, թե ամենահավանականն այն է, որ V դ. կեսերին սյունազարդ դահլիճը վերակառուցվել է, որի ժամանակ դրվել են սյուների հիմնահարթակները:

4. Այս վերակառուցման ժամանակ նորոգվել է նաև սրահի հատակը և երեսապատվել կրաշաղախով: Դահլիճի ներսում, տարբեր հատվածներում պահպանվել են ամուր տոփանած կավե նախնական հատակի մնացորդները: Երկու հատակների բարձրությունների միջև տարբերությունը կազմում է մոտ 20 սմ: Միջանկյալ այս շերտում, հատկապես դահլիճի արևելյան թևում, հանդիպում են տափակ և կիսակլոր կղմինդրների բեկորներ: Դրանք իրենց ֆակտուրայով և մշակումով կրկնում են կենտրոնական թաղամասի VII դ. կաթողիկոսարանի հատակի տակից գտնված կղմինդրների ձևերը, որոնք պատկանել են պալատի հարևանությամբ գտնվող կաթողիկե եռանավ տաճարի ծածկին: Անկասկած, միջնաբերդի սյունազարդ դահլիճն ունեցել է նույնպես կղմինդրե ծածկ, սակայն ոչ մի հետք չի մնացել վերջինիս կոնստրուկտիվ ձևերի վերաբերյալ: Մեզ թվում է, որ ծածկի ձևի որոշման խնդրում կարևոր նշանակություն ունեն ինչպես թռիչքների բացարձակ չափերը, այնպես էլ սյուների հեռավորությունների հարաբերությունը դահլիճի լայնության հետ: 1987 թ. դահլիճից հարավ կատարված պեղումների ժամանակ գտնվել են հարյուրավոր նման կղմինդրների բեկորներ, որոնք որոշակիորեն թվագրվում են IV դ. վերջ—V դ. սկզբով:

5. Դահլիճի կենտրոնական գահավորակի և հարավային պատի միջև բացահայտվել են երեք թաղում, այդ թվում՝ մեկը մանկան: Ելնելով այն հանգամանքից, որ թաղումներից մեկը անմիջապես խարիսխի տակի հարթակի մեջ է, պետք է ենթադրել, որ դրանք կատարվել են կառույցի ավերումից հետո՝ VII դ.: Գերեզմանների առկայությունը դահլիճի ներսում ենթադրում է սյունազարդ դահլիճի պաշտամունքային շինություն լինելը:

Այսպիսով, դահլիճը ներկայացնում է V դ. կառուցված հայկական եռանավ բազիլիկ սրահների վաղագույն ձևերից մեկը։ Դահլիճի՝ եկեղեցի լինելու փաստը հաստատվում է ծանրակշիռ կողմերով. ա) Շինությունը ճիշտ կողմնորոշված է արևմուտքից արևելք, որն առաջին հերթին բնորոշ է քրիստոնեական կառույցներին։ բ) Այն ներկայացնում է առանձին կանգնած կառույց, որը հատուկ է վաղ քրիստոնեական պաշտամունքային հուշարձաններին։ գ) Կարևոր նշանակություն են ձեռք բերում շինության ներսի թաղումները և թևավոր խաչերի բեկորները։ Որպես կանոն, միջնադարյան դերեզմանոցները և թաղումները նկատվում են եկեղեցիների շրջակայքում, շատ հազվադեպ՝ ներսում։ Դվինում թաղման այս ավանդույթը շարունակվել է նաև սրահի ավերումից հետո և, հավանաբար, այստեղ թաղվել են 640 թ. քաղաքի ավերման ժամանակ զոհված բնակիչներ, դուցե հոգևորականներ։ դ) Դվինի՝ քննարկվող եռանավ սրահի հիմնական բաղադրամասերից է կենտրոնական դահավորակը։ Այն արքունի կառույցների հետ կապելու ոչ մի ապացույց չկա, և միտք չունի նրա մեջ տեսնել արքունի գահավորակ։ Այդպիսի գահավորակները (bēma) այն տարածում ունեին վաղքրիստոնեական ասորական միանավ և եռանավ բազիլիկաներում[3]։ Դրանք հայտնի են հատկապես Ասորիքի հյուսիսային շրջաններում (Մինհար՝ IV դ. կես, Քիրքբիզե՝ IV դ., Քֆեիր՝ V դ., Քարբլոզե՝ V դ. վերջ և այլն)։ Դվինի բազիլիկայի գահավորակը իր հատակագծով գրեթե կրկնում է Բրադի սբ. Հուլիանոս եկեղեցու (399—402 թթ.) գահավորակը (աղ., նկ 3)[4]։

Դվինի եռանավ սրահը նման մանրամասներով, հայկական վաղմիջնադարյան պաշտամունքային հուշարձանների մեջ առայժմ միակ պահպանված օրինակներից է։ Սրահի որոշ հատվածներ անձեռնմխելի են մնացել. լոկ այն պատճառով, որ քանդվելուց հետո չեն վերականգնվել, և հատակագծային հորինվածքի շատ մանրամասներ պահպանվել են անփոփոխ՝ սկզբունական տեսքով։ Դվինին ժամանակակից հայկական միանավ և եռանավ սրահները դարերի ընթացքում բազմիցս վերակառուցվել են, որի հետևանքով նախնական շատ հանգույցներ խիստ փոփոխվել են։ Դա կարող էր տեղի ունենալ հավանաբար VI դ. կեսերից, երբ հայ-ասորական եկեղեցական հարաբերություններում նկատվում է վերջնական խզում, որն, անշուշտ, իր արտահայտությունը պետք է գտներ պաշտամունքային կառույցների ձևերում և ներքին հարդարանքում։

Հայ-ասորական ճարտարապետական փոխհարաբերությունների վերաբերյալ կարծիքները մինչև այժմ շատ պատահական բնույթ են կրել, և դրանք արժանի են խորաշնին ուսումնասիրության։ Խնդրո առարկա հարցին հատուկ հոդված է նվիրել Ա. Յակոբսոնը[5]։ Դեռ դարասկզբին Ն. Մառը գրում էր, որ «այդ վաղ ժամանակներում արևելահայկական եկեղեցին սերտ, այդ թվում բացառիկ կապերի մեջ էր ասորականի հետ», որ «քրիստոնեությունը Արևելյան Հայաստանում սկզբնապես օրգանական կապի մեջ էր Ասորիքի հետ, որտեղից եկեղեցական հոգևոր բովանդակության հետ մուտք էին գործում, հավանաբար, քրիստոնեական ճարտարապետության ձևերը»[6]։ Ն. Տոկարևին նույնպես չի ժխտում «Հայկական և ասորական վաղ քրիստոնեական որոշ հուշարձանների նմանությունը, որը երբեք չի նվազեցնում ոչ նրանց գեղարվեստական արժանիքները և ոչ էլ հայ վարպետների հիանալի տաղանդը։ Դա բացատրվում է ոչ թե շինարվեստի և ճարտարապետական մտքի ցածր աստիճանով, այլ ճարտարապետական թեմայի նորությամբ, որը պայմանավորված էր հայերի համար դեռևս անսովոր քրիս-

[3] G. Tchalenko, Villages antiques de la Syrie du Nord. Le massif du Belus a l'époque Romaine, II, Paris, 1953, t. IX, 1, X, 1, XI, 1—3, 6.

[4] Նույն տեղում, աղ. X, 1։

[5] А. Л. Якобсон, Армения и Сирия. Архитектурные сопоставления (Византийский временник, т. 37, М., 1976. с. 192—206).

[6] Н. Я. Марр, Ереруйк, Ереван, 1968, с. 29, 30, 37.

տոնական եկեղեցական ճարտարապետության առանձնահատկություններով»[7]։

Դվինի միջնաբերդում բացված եռանավ սրահը հայ քրիստոնեական ճարտարապետության վաղագույն օրինակներից է, հայ-ասորական ճարտարապետական սերտ փոխհարաբերությունների արդյունք։ Ամենայն հավանականությամբ, այն հիմնադրվել է IV դ. երկրորդ կեսին։ Բազիլիկան դադարել է գոյություն ունենալուց VI դ. կեսերին, մեղ անհայտ պատճառներով։ Վաղ միջնադարյան գրավոր մեկնաբանություններից հայտնի է, որ 554 թ. Դվինի եկեղեցական ժողովը որոշում է կայացնում քանդել Մանաճիհր Ռաժկի նեստորական եկեղեցին Դվինում[8], սակայն ոչ մի հիմք չկա այդ վկայությունները կապելու Դվինի հիշյալ բազիլիկայի հետ։ Ճիշտ է, նեստորականները V—VI դդ. Դվինում բավական մեծ ուժ էին ներկայացնում և, ըստ երևույթին, ունեին իրենց դաղութը։ Սակայն սխալ կլիներ մտածել, որ նրանք միջնաբերդի գագաթում կառուցել են իրենց եկեղեցին, քանի որ օտարերկրյա տարրն ընդհանրապես բնակվում էր քաղաքի արվարձաններում, մի հանգամանք, որը տեղական իշխանություններն առաջին հերթին կապում էին պաշտպանական նկատառումների հետ։

Եկեղեցին քանդվելուց հետո շենքը ուրիշ ֆունկցիոնալ նշանակություն է ձեռք բերում։ 1959—1961 թթ. Դվինի պեղումների մասնակիցների դաշտային օրագրերի մանրազնին քննությունից պարզվում է, որ սրահի տեղում՝ վերին շերտերում եղել են կավաշեն պատերով փոքր սենյակներ (դժբախտաբար պահպանված գծագրերը և լուսանկարները հստակության լրիվ պատկերը չեն ամբողջացնում)։ Ինչպես նշվեց, այդ սենյակներից մեկում հայտնաբերվել են VI—VII դդ. մոտ 20 կնքադրոշմ։ Սրահի արևմտյան թեքում պեղվել է ոսկերիչ-ակնագործի այրհեստանոց, որտեղից դտնվել է պատրաստի արտադրանք և կիսաֆաբրիկատ[9]։

Կառույցը վերջնականապես կործանվել է 640 թ.։ Ամբողջ տարածքը ծածկված է մոխրի հաստ շերտով, որը արաբների ավերումների հետևանք է։ VIII դ. սկզբում այստեղ կառուցվել է հում, մեծ աղյուսներով շարված հաստ պատերով պալատական մեծ համալիր։ Եռանավ սրահն, իսկ հետագայում հասարակական-տնտեսական նշանակությամբ շինության պատերը քանդվում են, իսկ հիմքերը մնում են նորակառույց պալատական շինության տակ։

ТРЕХНЕФНАЯ БАЗИЛИЧНАЯ ЦЕРКОВЬ В ЦИТАДЕЛИ ДВИНА

А. А. КАЛАНАТАРЯН, К. К. КАФАДАРЯН

Резюме

В 1961—1962 гг. на вершине двинского холма были найдены развалины большого трехнефного зала IV в., в центре которого выделялся полукруглый план кафедры или тронной возвышенности, и поэтому сооружение получило название тронного зала Аршакидских царей. Детальное изучение памятника и дополнительные раскопки последних лет приводят к выводу, что колонный зал—сооружение культового характера и представляет собой одну из ранних форм трехнефной базилики, в которой отражается тесная связь армянской и сирийской архитектур.

---

7 Н. М. Токарский, Архитектура Армении IV—XIV вв., Ереван, 1961, с. 73.

8 Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 72—73, Հ. Ղ. Վ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 413—414։

9 Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, II, էջ 59—62։